## Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

### (Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Լրացավ Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտի պատվավոր տնօրեն Բաբկեն Նիկոլայի Առաքելյանի ծննդյան 85-ամյակը: Անվանի գիտնականն իր կյանքի վեց տասնամյակները նվիրել է հին և միջնադարյան Հայաստանի պատմության, մշակույթի, արվեստի ուսումնասիրությանը, հայ հնագիտության, ազգագրության, վիմագրագիտության, բանագիտության զարգացմանը:



Բ. Ն. Առաքելյանը ծնվել է 1912 թ. փետրվարի 1-ին Արմավիրի շրջանի Գեղրլու (Մրգաշատ) գյուղում: 1931 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ուսումնարանը և այնուհետև երկու տարի աշխատել է Եղեգնաձորում: 1933 թ. նա ընդունվում է Երևանի Պետական Համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանում Բ. Առաքելյանի՝ դեպի հնագիտություն և արվեստ կողմնորոշման մեջ մեծ դեր ունեցան պրոֆ. Աշխարհբեկ Քալանթարի և անվանի արվեստագետ Կամիլա Տրևերի դասախոսությունները, որոնք ավելի քան խորացան, երբ 1936 թ. նա դարձավ Լենինգրադի համալսարանի ազատ ունկնդիր: Այստեղ նա լսում է ականավոր պատմաբաններ Ստրուվեի, Գրեկովի, Տարլեի, լեզվաբան Մեշչանինովի դասախոսությունները: 1938 թ. Բ. Առաքելյանը ընդունվում է ԱՍՍՀՄ-ի Պատմության Ինստիտուտի ասպիրանտուրան և ուսումնառության մի մասն անցկացնում լենինգրադյան հնագիտական դպրոցի ներկայացուցիչների շրջապատում: Ականավոր արևելագետ և հայագետ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ այս տարիներին ձևավորվում են Բ. Առաքելյանի գիտական-մասնագիտական գործելակերպն ու հետաքրքրությունների լայն շրջանակը՝ հին հայկական արվեստ, հնագիտություն, առասպելաբանություն, կորողային հուշարձաններ, հայ ժողովրդի պատմության տարբեր խնդիրներ: Նրա առաջին իսկ հոդվածները՝ «Կոշիկը» որպես սոցիալական տերմին» (1940), «Հայկ-Օրիոնը» (1941), «Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թ.» (1941), «Ժամանակագրական դիտողությունները» (1941) խոսում են հեղինակի՝ նյութին տիրապետելու ինքնատիպ հետազոտական մոտեցման մասին:

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ նա զորակոչվում է բանակ, մասնակցում մարտերին մինչև պատերազմի հաղթական ավարտը: 1946 թ. վերադառնում է և շարունակում գիտահետազոտական աշխատանքները Պատմության Ինստիտուտում:

Բ. Առաքելյանը մեծ հմտություն է ցուցաբերում գիտակազմակերպչական բնագավառում: 1947—1949 թթ. նա վարում է ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը, 1947-ին խմբագրում է «Տեղեկագիր» (հասարակական գիտությունների)

հանդեսը, 1949-ին ստանձնում է Պատմության Ինստիտուտի հնագիտության և վիմագրության բաժնի վարիչի պարտականությունները:

1949 թ. լույս է տեսնում «Հայկական պատկերաքանդակները IV—VII դդ.» մենագրությունը, որը դեռևս 1941 թ. պաշտպանվել էր որպես թեկնածուական դիսերտացիա: Այն նվիրված էր հայ աշխարհիկ և եկեղեցական քանդակների բնույթին: Հեղինակին հաջողվել է աշխատանքում բացահայտել քանդակների ժողովրդական առասպելական բնույթն ու իմաստը, կրոնական քանդակների նշանակությունը վաղ քրիստոնեական գաղափարախոսության ձևավորման գործում, նախորդ շրջանից եկող արմատներն ու ազդեցությունները, ընդհանրապես վաղմիջնադարյան արվեստի զարգացման մակարդակը և այլ հիմնախնդիրներ: Այս աշխատությամբ Բ. Առաքելյանը մտավ հայագիտության բնագավառի երևելի ներկայացուցիչների շարքը:

Այնուհետև Բ. Առաքելյանի ուշադրությունը սևեռվում է հաջորդ պատմաշրջանին: Հայաստանի միջնադարյան մայրաքաղաքներ Անիի և Դվինի պեղումների շնորհիվ կուտակված հարուստ նյութերը և մատենագրական անսպառ աղբյուրները հիմք հանդիսացան ստեղծելու հիմնարար մի ուսումնասիրություն միջնադարյան Հայաստանի քաղաքների և արհեստների վերաբերյալ: Նրա «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» երկհատոր մենագրությունը (1-ին հատորը լույս է տեսել 1958 թ., 2-րդ հատորը՝ 1964-ին) փաստորեն Հայաստանի նշված ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական պատմությունն է՝ հեղինակի գիտական վաստակի մեջ ամենակարևոր ներդրումը հայ միջնադարագիտության ասպարեզում: Այստեղ խոր վերլուծություններով ցույց են տրված ֆեոդալական քաղաքի առաջացման նախադրյալները, հետագա ձևավորումն ու զարգացումը, քաղաքների դասակարգումը: Հատկապես նշանակալից են աշխատության մեջ ընդգրկված տարբեր արհեստներին վերաբերող գլուխները (մետաղագործություն, ապակեգործություն, խեցեգործություն և այլն), որում առանձին վերցրած մենագրական բնույթի ուսումնասիրություններ են: Լուսաբանված են նաև ապրանքային արտադրության, ներքին և արտաքին առևտրի, դրամաշրջանառության, քաղաքների ներքին կառուցվածքի, ինքնավարության, համքարությունների, սոցիալական ներհակությունների սրման ու պայքարի, քաղաքների անկման պատճառների հարցերը:

1954 թ. Բ. Առաքելյանին այս աշխատության համար շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

Հատկապես մեծ են Բ. Առաքելյանի ծառայությունները հայ հնագիտության, նյութական մշակույթի ուսումնասիրության բնագավառում: Լինելով միաժամանակ և՛ հնագետ, և՛ պատմաբան, նա կարողացել է ճիշտ գնահատել երկրի պատմական զարգացման օրինաչափությունները, տեսնել հնագիտորեն շլոսաբանված ստվերոտ այն տեղերը, որոնց հետազոտությունը առաջնահերթ էր հայոց պատմության ուսումնասիրության համար: Այդպիսին էին վաղ հայկական, հելլենիստական և ետհելլենիստական (այսպես կոչված անտիկ դարաշրջանի) նյութական մշակույթի բնագավառները, որոնք հայտնի էին գրեթե միայն գրավոր աղբյուրների շնորհիվ: Հետազոտությունների սկիզբը դրվեց 1949-ին, Գառնիի ամրոցի պեղումներով՝ Բ. Առաքելյանի ղեկավարությամբ:

Գառնին հայտնի էր իր հնաբանական տաճարով, պարիսպներով և Տրդատ թագավորի արձանագրությամբ: Պեղումների ժամանակ բացված պաշտպանական համակարգը, պալատական շենքերը, բաղնիքն իր խնձանկար հատակով, դամբարանները, հնագիտական առատ նյութը հնագետ-մշակութաբանին հնարավորություն տվեցին կատարել առաջին քայլերը Հայաստանի հելլենիստական դարաշրջանի մշակույթի ուսումնասիրության ուղղությամբ և ցույց տալ նաև այդ մշակույթի տեղական ինքնատիպ գծերը: Գառնիի արշավախումբը մի դպրոց էր, որտեղ իրենց մկրտությունը ստացան հայ հին մշակույթի մի շարք մասնագետներ: Հնագիտական աշխատանքներին մեծապես նպաստեցին ակադեմիկոս Հովսեփ Օրբելու և Կամիլա Տրևերի պարբերական այցելությունները Գառնի, նրանց տված խորհուրդները: Գառնիի պեղումների արդյունքները հանրագումարի են բերված Բ. Առաքելյանի ղեկավարությամբ հրատարակված 6 գրքերում, որոնցից 1—3-րդի հեղինակն է նա (1951, 1955, 1963 թթ.): 1968 թ. ԱՄՆ-ում դրանցից հրատարակվել են 1-ինը և 2-րդը:

Նուրարտական շրջանում բուն հայկական մշակույթի ձևավորման, այդ խնդրում ուրարտական մշակույթի թողած ազդեցությունների, հինարևելյան, աքեմենյան (իրանական) և հայկական մշակույթների փոխառնչությունների վերաբերյալ անգնահատելի աղբյուր հանդիսացան հայկական պետականության առաջին մայրաքաղաք Արմավիրից հայտնաբերված նյութերը: Արմավիրի արշավախումբը Բ. Առաքելյանի ղեկավարությամբ սկսեց աշխատել 1962 թ.:

Հայաստանի հելլենիստական և ուշ անտիկ ժամանակաշրջանի մշակույթի և պատմության չպարզաբանված հարցերի ուսումնասիրության առումով կարևորագույն նշանակություն ունեցան Արտաշատի՝ 1970 թ. սկսված պեղումները: Արամսի ափին կառուցված այդ փառահեղ մայրաքաղաքի ճարտարապետական նկարագիրը իր ինը բլուրներն ընդգրկող պաշտպանական համակարգով և հայտնաբերված հսկայական և մեծարժեք նյութերով լրացրեց մեր պատկերացումները հելլենիստական դարաշրջանի հայկական քաղաքի վերաբերյալ: Բ. Առաքելյանի գլխավորած արշավախմբի արդյունքները հրապարակված են («Արտաշատ 1-ին», ռուսերեն, 1982).

Արմավիրի, Արտաշատի և Գառնիի պեղումները հիմնականում լուծեցին մ. թ. ա. VI—մ. թ. III դդ. հայկական մշակույթի ձևավորման, նրա զարգացման խնդիրները՝ բացահայտելով նրա դերը հին աշխարհի մշակութային գանձարանում:

1957-ին Բ. Առաքելյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում: 1968-ին նա ընտրվում է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ, 1974-ին՝ ակադեմիկոս: Նա նաև Գերմանիայի Հնագիտության Ինստիտուտի (Բեռլին) իսկական անդամ է:

1976 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով լույս է տեսնում Բ. Առաքելյանի «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության» ընդհանրացնող մենագրությունը: Դա հեղինակի շուրջ 30-ամյա գիտական քննումների մի հանրագումար է, եզակի՝ Հայաստանի հին մշակույթին և արվեստին նվիրված աշխատանքների մեջ, որտեղ ներկայացված են հին հայ արվեստի զարգացման փուլերը:

Բ. Առաքելյանը մոտ 120 գիտական հրապարակումների հեղինակ է, մասնակից է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական ութ հատորանոց հրատարակության ստեղծման աշխատանքներին, որի համար արժանացել է պետական մրցանակի, այդ բազմահատորյակի 1-ին, 2-րդ և 3-րդ հատորների հեղինակներից է, խմբագրել է 3-րդ հատորը: Նա հեղինակել և խմբագրել է հայ ժողովրդի պատմության դպրոցական դասագրքերը, որոնք հրատարակվել են 1951, 1957 և 1981 թթ.:

Մեծ է Բ. Առաքելյանի վաստակը գիտական որակյալ կադրերի պատրաստման գործում: Նա անեցրել է երիտասարդ հնագետների մի ամբողջ սերունդ: Երևանի Պետական Համալսարանի պատմության ֆակուլտետում, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում նա մատաղ սերնդի մեջ սերմանել է հայրենասիրություն և նվիրվածություն հայրենի հուշարձաններին և նախնիների ժառանգությանը:

Բ. Առաքելյանը, գիտական վաստակին զուգընթաց, մեծ ծառայություններ է մատուցել հանրապետությունում հումանիտար գիտությունների, մասնավորապես հայագիտության կազմակերպմանն ու զարգացմանը: 1982—1990 թթ. նա գլխավորել է Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի պատմության և տնտեսագիտության բաժանմունքի աշխատանքները, իր մեծ ավանդը դնելով հայ պատմագիտության զարգացման գործում:

1959 թ. ի վեր, շուրջ 30 տարի, նա իր իսկ հիմնադրած Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտի տնօրենն է եղել: Բ. Առաքելյանի երկարատև ղեկավարության ներքո ինստիտուտը իր բազմաճյուղ մասնագիտություններով վերահեց հայ նյութական և հոգևոր մշակույթի հետազոտության առաջնակարգ օջախի, ստանալով միջազգային հանաչում:

Անուրանալի են Բ. Առաքելյանի ծառայությունները մշակույթի հուշարձանների, հնագիտական արժեքների պահպանության գործում: Երկար տարիներ նա գլխավորել է Գիտությունների Ակադեմիայի մշակույթի հուշարձանների պահպանության գիտամեթոդական խորհուրդը:

85-ամյակը բոլորած անվանի գիտնականն այսօր էլ ակտիվ մասնակցում է գիտական կյանքին: Նա Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտի պատվավոր տնօրենն է, մի շարք գիտական խորհուրդների անդամ: Շարունակում է գործել նրա բեղմնավոր գրիչը:

Բ. Առաքելյանի գիտական, գիտամանկավարժական, գիտակազմակերպչական և հասարակական անդուլ գործունեությունը բարձր է գնահատվել: Նա պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով:

Ցանկանք մեր սիրելի հոբելյարին քաջառողջություն, կորով, արևշատություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր՝ Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ